Բյուրոյի խորհրդի որոշման եզրափակիչ մասի ամփոփ նյութ

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ-ի ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի խորհրդի 21.07.2015թ-ի թիվ 19 արձանագրությամբ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ-ն Բյուրոյի կանոնների խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի.

RL 1-001 կանոնների 8.3.6-րդ և 7.7-րդ կետերի ու RL 1-017 կանոնների 5-րդ կետի խախտման համար Ընկերությանը հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումներ չկրկնելու հանձնարարականով:

Ընկերությանը տրվել է հանձնարարական մեկ ամսվա ընթացքում վերացնել կատարված խախտումը (առնվազն՝ անվավեր ճանաչել հատուցում վճարելու մասին որոշումը, կատարել ապահովագրական պատմության համապատասխան ուղղում) և նույն ժամկետում ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկացնել Բյուրոյին: